ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԿՈԴ՝ Պ-052-28.09.2021,09.11.2021-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	1. Հոդված 1	Նկատի ունենալով մասնագետի և փորձագետի կողմից հաշվեքննության իրականացմանը ներգրավվելու նպատակը և միևնույն ժամանակ հաշվի առնելով վերջիններիս լիազորությունները՝ հարկ ենք համարում նշել, որ ներկայացված Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է և չի բխում «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով ամրագրված կարգավորումների տրամաբանությունից:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը հանվել է: Փոփոխվել է նախագծի 6-րդ հոդվածը	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	2. Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված կարգավորման բովանդակությունը որոշակի և հստակ չէ, այն թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմել	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն: Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվող ազնվության և բանիմացության սկզբունքներն հանվել են, քանի որ այդ դրույթների բովանդակությունը, ըստ	Ընդունվել է

		այն մասին թե նույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջները՝ կոնկրետ որ սկզբունքի պահպանման են միտված, մասնավորապես օրինակ՝ առաջարկվող կարգավորումից պարզ չէ թե Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի վերնագրում նշված ազնվության սկզբունքը ինչպես, ինչ պահանջների պահպանմամբ է դրսևորվելու:	էության, ամրագրված են գործող օրենքում:	
ՀՀ կառավարություն	3. Հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը (օրենքի 10-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելու մասին) լրացուցիչ հիմնավորման կարիք ունի	Ընդունվել է մասամբ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան դրույթը լրացվել է 16-րդ հոդվածում:	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	4. Հոդված 5	Քննարկել օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելու հարցը	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	5. Հոդված 6	Անհրաժեշտ է վերանայել նաև Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող կարգավորումը:	Ընդունվել է Հոդվածը լրացվել է:	Ընդունվել է